



**ՀԱՅՐԱՎԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ  
ՍՈՒՐԲ ԵԶՄԻԱԽՆԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՔՐԻՍՏՈՆԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒԻ ԱՌԲԻՎ  
ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ՄԱՂԿՅԱ ԴԱՇԼԻՑՈՒՄ**

Ապրիլի 21, կիրակի, Զատիկ, «Յարութիւն» Տեսառական մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Քրիստոսի հրաշափառ և սուրբ հարության բուապայծառ առավոտն է: Ամեն կողմ գարում, և բնության մեջ և մարդկանց հոգում:

Զատիկը ամենասփրված համաժողովքրդական տոններից մեկն է, զվարապես հայության տոնը, որը Մայր Աթոռում տոնվում է ավանդական հանդիսությամբ:

Վաղ առավոտվանից Մայր Տաճարը, վանքի շրջափակը լցվել են հավատացյալների և ուխտավորների խուռանքազմությամբ, մինչ նորանոր խմբեր գալիս հասնում են երկանից, շրջաններից, գյուղերից, հարևան ուսուցութիւններից:

Տոնականորեն զարդարված Մայր Տաճարի երկու դասերի մեջ տեղ են գրավել Գերագույն Հովուր Խորհրդի, Վերստուգի հանձնաժողովի անդամները, ճեմարանի դասիստուական կազմը և պաշտոնական անձնափորությունների:

Ժամը 11-ն է, Զվարթագին դողանչում են Մայր Տաճարի զանգերը և հավատացյալներին հրավիրում հայրապետական սուրբ պատարագի, Վեհարանում կազմվում է եկեղեցական թափոր: Նորին Ս. Օծությունը հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, պամպովանու տակ, խնկով ու աղոթքով, եր-

գով ու շարականով, ժողովրդական խանդավառություն սփուխութիւն մեջ, օրհնություն սփուխով իր շուրջը, իջում է Վեհարանից և անցնելով Տրդատյան դուռ առաջվար հանդիսավոր մուտք է գործում Մայր Տաճար: Հայրապետական թափորի առաջ քայլում են վանքի կարմրագեղեսու շաթիրները, վարդապետները տանում են գլխից բարձր բռնած հայրապետական քողը, զարդարան ու սուրբ խաչը:

Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ավագ Մեղան, սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Վեհափառ Հայրապետին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Շոմիշանիսյանը և գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Մահակյանը, հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մուշեղ վարդապետները Քառաձայն սուրբ պատարագը ներդաշնակ երգում է Մայր Աթոռի երգախումբը պ. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ: Ամեն կողմ խունկ, աղոթք, վեհություն ու խորհուրդ: Տաճարում շերմեռանդրուն աղոթում է հայ հավատացյալ ժողովուրդը, իր սրտառուց աղոթքները միախառներով պատարագի Վեհափառ Հայրապետի աղոթքներին:

Սուրբ պատարագը հանդիսությամբ շարունակվում է մինչև օձայր մերա: Այժմ քարուցի պահն է: Վեհափառ Հայրապետը դառնում է դեպի ժողովուրդը և տալիս սուրբ

Հարության մեծ ավետիսը բովանդակ հայության, խոսեղով սովոր հարության խորհրդով ու շնչով օծում իր գեղեցկագույն քարոզներից մեկը:

Սույն քարոզը ձայնասփռվեց օրեւանի ռադիոկայանից նույն գիշերը, ժամը 11.30-ին:



Հայրապետական սովոր պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը, նույն հանդիսությամբ և եկեղեցական թափորով, առաջնորդվեց Վեհարանի Մազկյա դաշինքը, որ բազմեց Հայրապետական Գահի վրա, ընդունեց պետական պաշտոնական անձնավորությանց, Գերագույն Հոգառու Խորհրդի, մտավորականության, միաբանության, ճեմարանի ուսանողության, վանքի պաշտոնեության, երգչախմբի անդամների և ժողովրդի շնորհավտությունները:

Հյուրերի թվումն էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը իր տիկնոջ հետ, խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը, Խորհրդի հարգելի անդամները, ակադեմիկոս նկարիչ Մ. Սարյանը, ժողովրդական նկարիչ Հ. Կոչգյանը, ճարտարապետներ Ա. Մազմանյանը, Ռ. Խորյակյանը, պրոֆ.-դրույտ Կ. Ղաֆարյարյանը, ինժեներներ, մամուլի ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Պաշտոնական այս ընդունելովովյան ժամանակ խոսք առավ գերաշնորհ Տ. Սահակ արքայիսկուպոս և հանուն հայ ժողովրդի և բոլոր ներկաների սրտագինս շնորհավորեց Վեհափառ Հայրապետին Ս. Հարության տոնի առթիվ, նորին Ս. Օծության կյանքի և արևատության սրտարուս բարեմաղթություններով:

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը, գոհովյուն հայունեց Աստուծոն, որ այս տարի առաջին անգամ Մայր Աթոռում է տոննուածքիստոսի Ս. Հարության տոնը, ապա շնորհավորեց բովանդակ հայության համագովային մեծ տոնը՝ Ս. Զատիկից, օրնեց հայրենի հարազատ կառավարությունն ու նրա իմաստում ղեկավարներին, օրնեց հայ մշակութիւնի անխոնջ մշակներին՝ արքեստագետներին, գրողներին, ճարտարապետներին, ինժեներներին և ապա բովանդակ հայության գոհովյուններով:

Ընդունելով պաշտոնական մասի ավարտից հետո, բոլոր ներկաները հյուրասիրվեցին Հայաստանի կոնյակով և շոկոլատով: Ապա Վեհափառ Հայրապետը ընդունեց բոլորի սրտագին շնորհավորություններն ու աջահամբուլուրը:



Ժամը 4-ին Վեհարանի սեղանատան մեջ տրվեց Ս. Զատիկի առթիվ պաշտոնական ճաշկերություն, որին ներկա էին Գերագույն Հոգառու Խորհրդի և Վեհապետութիւն հանձնաժողովի անդամները, ամբողջ միաբանությունը, վանքի պաշտոնեության, երգչախմբի անդամների և ժողովրդի շնորհավտությունները:

Հյուրերյան թվականը էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը իր հարգելի տիկնոջ, Խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանի և Խորհրդի մյուս անդամների հետ, ակադեմիկոս նկարիչ Մ. Սարյանը, նկարիչ Հ. Կոչգյանը, ճարտարապետներ Ա. Մազմանյանը, Ռ. Խորյակյանը, պատմական գիտությունների գոլուտ-պրոֆ. Կ. Ղաֆարյարյանը և ուրիշներ:

Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով բացվեց զատկական սեղանը: Տոնական ուսումնական և իսանդավառ տրամադրություն էր ստեղծվել սեղանների շուրջ: Առաջին բաժանմքը առաջարկվեց Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը, որն ընդունվեց սրտագին ծափահարություններով: Ապա նորին Ս. Օծությունը բաժաններ առաջարկեց Ս. Էջմիածնի, հայրենի կառավարության և հայ ժողովրդի կենաց, որնք ընդունվեցին բուռն ծափահարություններով:

Ճաշկերությունը ընթացքով ներկաներից շատերը և ի մասնավորի նկարիչ Մարտիրոս Սարյանը, պրոֆ.-դրույտ Կարո Ղաֆարյարյանը և Գերագույն Հոգառու Խորհրդի անդամ Ա. Տիրացյանը շնորհավորության և բարեմաղթովյան սրտագին խոսքեր ասացին Վեհափառ Հայրապետին, ծանրանարով նաև Ս. Էջմիածնին վիճակված կարևոր պատասխանատու դերի վրա:

Ս. Զատիկի տօնի առթիվ տրված պաշտոնական այս ճաշկերությունը անցավ ուրախ և շերմ մթնոլորտի մեջ:

Վեհափառ Հայրապետի աղոթքով և պահպանիշառությունով վերջացավ ընդունելովյունը:

